«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին», «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների և «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի թիվ 1543-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծեր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 1998 թվականի հուլիսի 1-ի քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 53-րդ հոդվածի 3-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 8.1-րդ կետով.

«8.1.) որոշում կայացնել կալանավորված անձի տեսակցությունը մերձավոր ազգականի հետ արգելելու և արգելելը վերացնելու վերաբերյալ.»:

Հոդված 2. Օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասում.

1) լրացնել հետևյալ բովանդակությամբ 24.1-րդ կետ.

«24.1.) միջնորդություն ներկայացնել դատախազին կալանավորված անձի տեսակցությունը մերձավոր ազգականի հետ արգելելու վերաբերյալ.»:

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 25.1-րդ կետ.

«25.1.) անհրաժեշտությունը վերանալու դեպքում վերացնել կալանավորված անձի տեսակցությունը մերձավոր ազգականի հետ արգելելը.»:

Հոդված 3. Օրենսգրքի 65-րդ հոդվածի 2-րդ մասում լրացնել հետևյալ

բովանդակությամբ 9.1-րդ կետ.

«9.1.) կալանքի տակ գտնվելու ընթացքում տեսակցել իր օրինական ներկայացուցչի, ինչպես նաև մերձավոր ազգականի հետ՝ բացառությամբ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերի.»:

Հոդված 4. Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 153.1-րդ և 153.2-րդ հոդվածներով.

«Հոդված 153.1. Կալանավորված անձի տեսակցությունը մերձավոր ազգականի հետ արգելելը

1. Բացառիկ դեպքերում, երբ բավարար հիմքեր կան ենթադրելու, որ կալանքի տակ գտնվելու ընթացքում մերձավոր ազգականի հետ մեղադրյալի տեսակցությունը կարող է խոչընդոտել մինչդատական վարույթում գործի քննությանը, հանցագործությամբ պատճառված վնասի հատուցմանը կամ նպաստել հանցավոր գործունեությամբ զբաղվելուն, դատախազը կարող է քննիչի պատճառաբանված միջնորդության հիման վրա որոշում կայացնել՝ կալանավորված անձի տեսակցությունը քննիչի միջնորդության մեջ նշված մերձավոր ազգականի հետ արգելելու մասին՝ մինչև երկու ամիս ժամկետով:

2. Դատական քննության փուլում կալանավորված անձի տեսակցությունը մերձավոր ազգականի հետ արգելելու ձևով դատավարական հարկադրանքի միջոցի կիրառման հարցը որոշում է դատարանը:

3. Սույն հոդվածում նշված դատավարական հարկադրանքի միջոց կիրառելու մասին միջնորդությունը պետք է պարունակի տվյալներ կալանավորված անձի այն մերձավոր ազգականի մասին, ում հետ տեսակցությունն առաջարկվում է արգելել:

4. Դատավարական հարկադրանքի միջոց կիրառելու մասին դատախազը կայացնում է պատճառաբանված որոշում, որի պատճենն անհապաղ, բայց ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում ուղարկում է կալանավորված անձին, նրա պաշտպանին՝ քրեական գործով վարույթին մասնակցության դեպքում, ինչպես նաև կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմին:

5. Եթե հնգօրյա ժամկետում դատախազը քննիչի միջնորդության կապակցությամբ որևէ որոշում չի կայացնում, ապա միջնորդությունը համարվում է մերժված:

Հոդված 153.2. Կալանավորված անձի տեսակցությունը մերձավոր ազգականի հետ արգելելու ձևով դատավարական հարկադրանքի միջոցը վերանայելու կամ վերացնելու պարտականությունը

1. Կալանավորված անձի տեսակցությունը մերձավոր ազգականի հետ արգելելու ձևով դատավարական հարկադրանքի միջոցի ժամկետի

երկարացման անհրաժեշտության դեպքում դատախազը սույն օրենսգրքի 153.1-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետը լրանալուց տասն օր առաջ քննիչի միջնորդությամբ կամ սեփական նախաձեռնությամբ պետք է վերանայի նշված հարկադրանքի միջոցի ժամկետի երկարացման անհրաժեշտության և իրավաչափության հարցերը՝ այդ մասին կայացնելով պատճառաբանված որոշում:

2. Այն դեպքում, երբ վերանում է կալանավորված անձի տեսակցությունը մերձավոր ազգականի հետ արգելելու անհրաժեշտությունը, դատախազը կամ քննիչը պարտավոր են իրենց որոշմամբ վերացնել այն: Դատավարական հարկադրանքի միջոցը վերացնող մարմինն անհապաղ կալանավորված անձին, նրա պաշտպանին՝ քրեական գործով վարույթին մասնակցության դեպքում, ինչպես նաև կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմին է ուղարկում իր համապատասխան որոշման պատճենը:»:

Հոդված 5. Օրենսգրքի 293-րդ հոդվածի 2-րդ մասում «խափանման միջոցները» բառերից հետո լրացնել «, կալանավորված անձի տեսակցությունը մերձավոր ազգականի հետ արգելելը» բառերը:

Հոդված 6. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԵՎ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի փետրվարի 6-ի ՀՕ-305 օրենքի 15-րդ հոդվածում.

1) 9-րդ պարբերությունից հանել «կամ կալանավորված» և «կամ կալանավորվածներին պահելու վայրի» բառերը.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 10-րդ պարբերություն.

«Կալանավորված անձի տեսակցությունը մերձավոր ազգականի հետ արգելելը կատարվում է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված հիմքերով և կարգով: Կալանավորված անձի տեսակցությունները զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների և այլ անձանց հետ արգելելը կատարվում է ձերբակալված անձանց համար՝ սույն հոդվածով նախատեսված կարգով:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

ՈՐՈՇՈՒՄ

«____» «_____» 2018 թվականի N _____ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 3-Ի ԹԻՎ 1543-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 1543-Ն որոշմամբ հաստատված հավելվածի XVI-րդ գլխի 137-րդ կետի երկրորդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Կալանավորված անձին մերձավոր ազգականի հետ տեսակցությունն արգելելը թույլատրվում է միայն դատախազի կամ դատարանի որոշման հիման վրա: Մինչև համապատասխան որոշումը ստանալն անձին տեսակցության տրամադրումը չի կարող արգելվել:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը: